Ծուշանիկ Կուրղինյան

Կուզեի տեսնել երկինքն ամպամած . . .

Կուզեի տեսնել երկինքն ամպամած
Վշտի, տանջանքի մռայլ ամպերով՝
Արևն ու լուսին անլույս քարացած,
Աստղերին՝ քողված սգի սև քողով:

Կուզեի տեսնել ամպերին կապույտ,
Երկրում թափված արյունից ներկված,
Որ տառապանքը իր շնչով անգութ
Իշխեր միշտ այնտեղ՝ երկիրը թողած:

Կուզեի երկնից ոգիներն անմահ
Տանջվեին անհույս, արցունք թափեին,
Որ մաշեր նրանց քաղցը սովամահ,
Անեծք կարդալով երկիր իջնեին:

Կուզեի տեղար անձրև արյունից,
Որոտն անխափ դղրդար այնտեղ .
Երկնի ու երկրի ցավագար երգից
Տիրեր միշտ դժոխք հուժկու և ահեղ:

Կուզեի կորչեր հանգիստը Տիրոջ,
Խավարը փարվեր լուսատու դեմքին,
Ու սուլեր վիշտը անդուլ ու անխոնջ,

Տանջանքի ծուխը գալարվեր գահին:

Ու նա միշտ տանջվեր իր գործից սխալ,
Ճնշեր միշտ կուրծքը վճիռն անարդար,
Ու ինքը ստեղծող անհաս ինքնակալ,
Մենք այստեղ ստրուկ՝ գոյության համար:

1906